ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 248 – Ա

ՍԵՐԳԵՅ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ «ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, 2026 թվականի մայիսի 21-ի հարցազրույցի N 739 արձանագրությունը և Ս. Ավանեսյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

2026 թվականի հունիսի 1-ից Սերգեյ Ավանեսյանին նշանակել «Գորիսի Յու. Բախշյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի

ժամկետով և ազատել նրան նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունների կատարումից:

Ստորագրող՝
ՆԱՐԵ ՂԱՖԱՐՅԱՆ
6101900681
2026-05-29 12:49:13 GMT+4
Հավաստագրման է ենթակա է նշումից

ՀՀ Սյունիքի մարզպետին փոխարինող՝
Ն. Ղազարյան

2026թ. մայիսի 27
Ք. Կապան